## ԵՐԵՎԱՆՅԱՆ ՑՈՒՑԱՍՐԱՀ-ՆԵՐՈՒՄ

Յուրաքանչյուր արվեստ սնուցվում է կյանքով, իսկ արվեստը կյանքն է, որ կա, ուր ներդաշնակ են, միաձույլ ոչ միայն արվեստագետի փիլիսոփայությունն ու աշխարհընկալումը, այլև ստեղծագործական լավագույն մտահղացումները, կյանքի իր իսկ մեկնաբանությունները:

Թերևս այս խորհրդով էլ ստեղծվել է Հայկական ՍՍՀ վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստը:

Դրա լավագույն ապացույցը սանգինով կատարված նրա առաջին աշխատանքներն են, առաջին վեռական քայլերը դեպի ազգային արվեստ. «Ինքնանկար», 1972 թ., «Կինոօպերատոր Ս. Ֆիլիպովի դիմանկարը», 1973 թ., «Մաշան», 1983 թ., ստեղծագործություններում գծանկարն իր ազատությամբ մեջ, ծավալների ընդգրկելիության սահմաններով, լուսաստվերի նրբագեղությամբ հաստատում էր շատ ինքնատիպ մի արվեստագետի տաղանդի մեծությունը:

1959 թվականին Վիեննայի համաշխարհային երիտասարդական փառատոնում «Ռաանդոհնեհի դիմանկարը» գրաֆիկական աշխատանքի համար նա արժանացավ բրոնզե մեդալի:

Այնուհետև, արդեն ավելի ուշ, 1968 թվականին, Կոմիտասի գրաֆիկական դիմանկարի համար, ստացավ Հայաստանի կուլտուրայի մինիստրության առաջին մրցանակը: Իսկ այդ խոստովանելը սկզբի շարունակությունն ու լավագույն ապացույցը նրա օրերս բացված ցուցահանդեսն էր Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում: Ներկայացված էին նկարչի վերջին տարիների գրաֆիկական աշխատանքները կատարված լկասի վրա, որը նա առաջին անգամ օգտագործեց գծանկարի համար: Որովհետև «Մատիտանկարի շրջանակները սկսեցին նեղել նրա աշխարհազգացողությունը, նրա գեղարվեստական մտածողության մասշտաբն անխուսափելիորեն հանգեցնում էր գծանկարչության ավանդական հասկացության կործանմանը»,— նրա այս վերջին աշխատանքների մասին գրում է Կիրա Միխայլովսկայան:

Կատարվեց անսպասելին: Առանձին հնչեղություն ստացան աշխատանքները լկասի վրա, զգացումների ու մտքի խտացումները նոր արտահայտչամիջոցներով, նոր ասելիքով հանդես եկան: Ձևերի բյուրեղյա մաքրությունը, միևնույն ժամանակ և պարզությունը եկան հաստատելու նրա արվեստի ուժը, կյանքի ու ստեղծագործության կապը:

Այստեղ սովորական միագույն գրաքարը լկասի վրա հնչեց «գույնի» ուժով, ստեղծեց շարժում, ջերմություն «գույնի» այդ անցումներում, գրաֆիտի նյարդային, էքսպրեսիվ շեշտերը, երբեմն նաև սահուն ու անընդհատ շարժման միջոցով ընդամենը մեկ գույնի օգնությամբ ստեղծեց «բազմերանգություն»:

# ՄՈԳԱԿԱՆ ԲՅՈՒՐԵՂԻԿՈՎ





Արվեստագետի ուժը ոչ միայն տեսնել կարողանալն է, այլև տեսանելի դարձնելու ուժը, անշուշտ նաև հոգևոր այնպիսի հարստության առկայությունը, առանց որի անհնար է արվեստի իսկական արժեք ստեղծելը, քանզի միայն վարպետ կատարումը բավական չէ կատարյալը, ավարտունը ստեղծելու համար:

Իրերի ու մարդկանց մասին ունեցած իր փիլիսոփայությունը, երևակայությունը լավագույն գրավականն են մարդկային բարդ ու անսանձ հոգու թռիչքները տեսնելու, դրանք մեկ այլ տեսանկյունով դիտելու կարողությունները: Այս առումով հետաքրքիր են «Ֆ. Մ.-ի դիմանկարը», 1981 թ., «Ինքնանկար», 1981 թ., «Նկարչի կնոջ դիմանկարը», 1981 թ., «Էլդար Ռյազանովի դիմանկարը», 1981 թ., «Լևոն Աբրահամյանի դիմանկարը», 1983 թ.:

Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստում չկա սեփական կարողությունները ցուցադրելու ոչ մի ճիգ, դրանք ընդգծելու ավելորդ ոչ մի փորձ: Զուտ ճշմարիտ, մեծ արվեստ ստեղծելու փափագ, նվիրում, հավատ այն ամենի նկատմամբ, ինչ-որ ինքն անում է: Այդ է պատճառը, որ նրա արվեստը ունի անհատականության խոր կնիք, բարձր արտիստականություն, որը գալիս է իր հերթին ընդգծելու ոչ միայն նյութի բովանդակությունը խորության մեջ, ստեղծագործության ներքին ուժը, կարողությունը, այլև ստեղծում է մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր մանրամասն անհրաժեշտաբար է հարկավոր:



Խաչատրյան նկարչի սկզբունքը, մտածելակերպը, ստեղծագործության մեթոդը դասականությունն է, նրա մոտ դասական ձևերն իրենց պարզությամբ, միևնույն ժամանակ և խստությամբ, ստեղծում են բարձր արվեստ, արվեստ հոգեկան բարդ ու հակասական աշխարհով, փիլիսոփայությամբ, իր ցավի մեջ մենակ, ելքի պատրանքով ապրող մարդու մասին: Եվ հենց շատ կարևոր այդ «էլ… ճշմարտությունն է հուզում Ռու-դոլֆի արվեստում, քանզի … վերաբերում է իրեն՝ մարդ… «Ելք»՝ լինի դա ցավի մեջ հո-գեկան բազմաթիվ վայրէջքն… պահին մարդկայնորեն գեղեց… պահպանել կարողանալով, թե … նելու ուժով, յուրաքանչյուր պա-տուհանի գոյությամբ այդ արվես-տում ընդհանրապես, թե բազ-մաթիվ շշերի մեջ կտրված ծա… շիվերի բարձրանալու հետ: … լապես, որն է զգացմունքների … բունակած իմաստը, նրանց հ… գելու հավակնությունը…

Հետաքրքիր են նրա «Պատուհանի առաջ», «Նատյուրմորտ շշերով» ստեղծագործությունները, «Մարյանի դիմանկարը», Հ. Իգիթյանի դիմանկարը», «Ինքնանկար», 1983 թ.:

Այստեղ է, որ ստեղծագործության գեղարվեստական լեզուն, իր մեջ խտացնելով արվեստագետի միտքը, մարդու հոգեբանության խոր իմացությունը, դեմքի յուրաքանչյուր շարժման անկրկնելիությունը որսալու կարողությամբ ստեղծում է մնայուն գեղարվեստական արժեքներ հայ գրաֆիկայի պատմության մեջ:

«Հասարակ մատիտով կատարված գծանկարը,— գրում է Միխայիլ Լազաևը,— ասես վերափոխվում է մի «մոգական բյուրեղի», ստեղծելով հետաքրքիր, հուզիչ պատմություն մարդու անձի, նրա անկրկնելի անհատականության, հոգևոր հարստության մասին»:

Ապշեցնում է նկարչի մանրակրկիտ մտածողությունը, կոնկրետացումը, սևեռուն ուշադրությունը

Ապա նրա յողա՞յր: Իսկ երբ ձեռքն … գող սպա է և ճիանալի մարդ:

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ